ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/44, 09.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Նուռ» ՍՊԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման, ճաքալցման և հողային պաստառով գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել գնման առարկայի փոփոխության մասին որոշում և 1-8-րդ չափաբաժինները հայտարարել 1 չափաբաժնով.
2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի 9-րդ չափաբաժնի համար նախատեսված ճաքալցման ագրեգադի նկարագրությունը փոփոխելու մասին որոշում.
3. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրել պարզաբանում բողոքաբերի կողմից 04.04.2019թ. կատարված հարցման վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

	ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ
ԲՈՂՈՔ ԲԵՐՈՂ	«ՆՈՒՌ» ՍՊԸ (գրանցման հասցե՝ ՌԴ, Թաթարստանի հանրապետություն, ք. Բուգուլմա, Լենինի փող. 139/1, ծանութցման հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 2, 430, ՀՎՀՀ՝ 1645023474)
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (հաշվառման հասցե՝ ք. Երևան, Եղիազարյան 28, ծանուցման հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 2շ 430 տարածք, նույանականացման քարտ՝ 009115015, տրված՝ 18.12.2017թ. 013-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր՝ 1898, հեռ 077 10-50-66 էլ. փոստ՝ grigoryangor@mail.ru)
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐՆ (հասցե՝ ք. Երևան, Արգիշտիի 1)
ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԾԱԾԿԱԳԻՐԸ	ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՅԹԵՐԻ ԱՍՖԱԼՏ-ԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՃԱՔԱԼՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՍՏԱՌՈՎ ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17

ԲՈՂՈՔ

1. *<u>ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՓԱՍՏԵՐԸ:</u>*

Գնահատող հանձնաժողովի 26.02.2019թ-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեքստը:

Հրավերում առկա տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն կազմված է խտրական և թերություններով:

Բողոքաբերը 04.04.2019թ-ին հրավերի տեխնիկական բնութագրի պարզաբանման նպատակով, օրենքով սահմանված կարգով, հարցում է ուղարկել գնահատող հանձնաժողովին սակայն առ այսօր որևէ պատասխան չի ստացել:

2. <u>ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ:</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝ մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Տվյալ պարագայում պատվիրատուն միևնույն բնութագիր ունեցող շախատանքները արհեստականորեն բաժանել է 8 չափաբաժինների, այն դեպքում, երբ դա կարելի էր հայտարարել և իրականացնել մեկ չափաբաժնով:

Մեկ չափաբաժնով մրցույթը իրականացնելու դեպքում անհամեմատ կկրճատվի նաև պահանջվող տեխնիկական միջոցները և աշխատանքային ռեսուրսները: Օրինակ՝ 32 ավտոինքնաթափի փոխարեն կարելի է ամբողջ աշխատանքներն իրականացնել 15-20 ավտոինքնաթափով և 4 ճարտարագետ-շիրարարի և ճանապարհաշինարարի միջոցով: Նման պայմաններում մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկը բավականին կնվազի, ինչի արդյունքում հնարավոր կլինի իրականացվելիք աշխատանքները ձեռք բերել բավականին մատչելի գնով:

Անորոշ է նաև պահանջվող տեխնիկական միջոցների 9-րդ չափաբաժնի համար նախատեսված ճաքալցման ագրեգադի նկարագրությունը: Հրավերի տեքստի համաձայն պահանջվում է ճաքալցման ագրեգադ եվրոպական արտադրության կամ համարժեք: Որևէ նշում ագրեգադի տեխնիկական տվյալների մասին առկա չէ, հետևաբար անհնար է որոշել դրա համարժեքությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ինչպես արդեն նշել եմ բողոքաբերի կողմից 04.04.2019թ-ին հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար հարցում է ներկայացրելլ գնահատող հանձնաժողովին, սակայն որևէ պատասխան չի ստացվել: Հանձնաժողովի կողմից խախտվել է բողոքաբերի օրենքով սահմանված պարզաբանում ստանալու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-ից 48-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով

խնդրում եմ

բողոքը բավարարել, այն է՝

1. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել գնման առարկայի փոփոխության մասին որոշում և 1-8 չափաբաժինները հայտարարել 1 չափաբաժնով:
2. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «տեխնիկական միջոցներ» որոկավորման չափանիշի 9-րդ չափաբաժնի համար նախատեսված ճաքալցման ագրեգադի նկարագրությունը փոփոխելու մասին որոշում:
3. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին տրամադրել պարզաբանում բողոքաբերի կողմից 04.04.2019թ-ին կատարված հարցման վերաբերյալ:

Կից ներկայացնում եմ

1. Բողոքարկման վճարի անդորրագիր.
2. Լիազորագիր.
3. Արտոնագրի պատճենը:

ԲՈՂՔ ԲԵՐՈՂ «ՆՈՒՌ» ՍՊԸ-Ի
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ 09.04.2019թ.